

## ՀՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ

Սեպտեմբերի 14—18-ը Իտալիայի Վենետիկ քաղաքում կայացավ հոբելյանական գիտաժողով՝ նվիրված հայ լրագրության նահապետ և հայագիտական երիցագույն հանդես «Բազմավեպի» 150-ամյակին: Այն նախաձեռնել էր և իրականացրեց Մխիթարյան միաբանության հայկական կաճառի վարչությունը:

Պաշտոնական բացումը տեղի ունեցավ Դոժերի պալատի «Գանջելերիա» սրահում միաբանությանն ընդհանուր աքթահայր Գևորգ վրդ. Պալլանի ողջույնի խոսքով: Ապա ելույթ ունեցավ Վենետիկի նահանգի միջազգային հարաբերությունների պատասխանատու Փիքքիո Ֆորլանին, որը հատուկ շեշտեց հայերի ներկայության բարերար ազդեցությունը քաղաքի միջազգային նկարագրի համար՝ ավելացնելով միաժամանակ, որ ազգային փոքրամասնությունների հետ փոխհարաբերությունները զարգացնելու առումով Մխիթարյան մայրավանքը տալիս է լավագույն օրինակը: Որպես վենետահայ փոքրիկ գաղութի ներկայացուցիչ՝ բժիշկ Սուրեն Ծովիկյանը հպարտություն հայտնեց, որ հաղ մամուլի նահապետը և հայերեն առաջին տպագիր գիրքը լույս են տեսել Ադրիատիկի ափերին փոված գեղահրեշտ սյւս քաղաքում, այսպէս շարունակեց. «Ծոթն ատենց ավելցնենք բազմադարյան ներկայությունը Մխիթարյան միաբանության և անոնց ունեցած վճռական դերը հայ մշակութային վերանորոգության մեջ, այն ատեն միայն կրնանք հասկնալ, թե ինչու բազմահազար հայեր ուխտավորի հոգիով կնտենան Վենետիկին և ոչ պարզ զբոսաշրջիկի»: Նույն օրը ընթերցված միակ գիտական-բանասիրական զեկուցումը պրոֆ. Ջուզեպպե Ֆրատտինն էր՝ «Կայսր» բառի նշանակությունը միջնադարյան հայ մատենագրության մեջ»:

Բացմանը հաջորդած օրերին Մուրադ-Ռաֆաէլյան վարժարանի Հայելիների մեծ սրահում ընթերցվեցին տարբեր երկրներից գիտաժողովին մասնակցելու եկած հայագետ-գիտնականների և Մխիթարյան վարդապետների զեկուցումները: Առաջինը հանդես եկած միաբանությանն ընդհանուր աթոռակալ, նշաբուր գիտնական Սահակ Ըմեճեմանը իր սեղ «Բազմավեպի» հիմնադրության շարժառիթներն ու պարագաները» նյութի շուրջ՝ ըսեց տալով հիմնադիր խմբագիր Գաբրիել

վրդ. Այվազովսկու և երիտասարդ մյուս արեղաներից յուրաքանչյուրի ներդրումը հանդեսի լուսընձայման գործում: Անդրադարձաբով «Բազմավեպի» ծնունդին՝ նա մասնավորապես ասաց. «Հոն ըսված գաղափարները ուրիշ բան չեն, եթե ոչ նույն Միաբանության հիմնադիր Մխիթար Աքրահոր ոսկեդեմիկ ընկերության գործադրությունը, սւն է՝ աշխատել ու նպաստել ազգի հոգևոր և մշակութային վերելքին: Հարմարեցնելով զայն դարուն պահանջներուն՝ կձեռնարկվի նոր միջոցի մը, որու վրաչեն անցած են այսօր հարյուր և հիսուն տարիներ»:

Մխիթարյան կաճառի վարիչ և «Բազմավեպի» ներկա խմբագիր Տաճատ Եարտըմյանը հանդեսը դիտեց իր «150 տարիների համապատկերի մեջ»: Նա ցույց տվեց, թե ինչպէս տասնամյակների ընթացքում «Բազմավեպը» թոթափելով իր ժողովրդական բնույթը՝ ստացավ մասնագիտական նկարագիր, դարձավ աշխարհաբարի կերտման զրուխաբոր դերակատարներից մեկը, նաև՝ շարժառիթ ալ թերթերի ծնունդի համար: Ջեկուցող վարդապետը իր խոսքերը փակեց հետևյալ նախադասությամբ. «Բազմավեպի» էջերը ճոխ են անթիվ բնագավառներէ քաղված գիտական պրպտումներով ու աշխատանքներով, որոնք իսկապէս հետազոտական հարուստ ժառանգ մը կկազմեն հայագիտության»:

Հաւեպի Մխիթարյան վարժարանի տեսուչ և Մխիթարյան կաճառի վարչության անդամ Հարություն Պոտիկյանը որպէս ելույթի նյութ էր ընտրել «Բազմավեպը» և 20-րդ դարու Մխիթարյան գրական-մշակութային վաստակը» թեման: Բանախոսը 19-րդ դարը Մխիթարյան միաբանության Ոսկեդար անվանելով հանդերձ՝ ավելացրեց, որ մեր դարն էլ ոչընչով չի զիջում նախորդին: Որպէս ասվածի օրինակներ տրվեց Վարդան Հացունիի, Արսեն Ղազիկյանի, Բարսեղ Սարգսյանի և այլոց անունները, որոնք բանասիրական ուսումնասիրությունները լույս են տեսել 1900-ից հետո: Ջեկուցողը հանգամանորեն անդրադարձավ հետեղեղնյան կացությունը, երբ ընդլայնվեց միաբանության դպրոցական ցանցը և ստեղծվեցին ակադեմիական լրջությամբ պատրաստված աշխատույններ ու դասագրքեր: Երաժշտագետ Նիկողոս Թահմիզյան

Որ խոսեց «Բազմավայր» և հայկական երաժշտությունը» նյութի շուրջ՝ այն բաժանելով երկու մասերի: Բանն այն է, որ հանդեսն իր էջերում ընդարձակ տեղ է հատկացրել և՛ եվրոպական, և՛ հայկական երաժշտարվեստների: Նա հատկապես կանգ առավ Կոմիտասի և «Բազմավայրի» կապերի վրա՝ շեշտելով նաև ընդգծված հետաքրքրությունը նոր հայտնվող Տիգրան Զուխաշյանի հանդեպ:

Հատուկ հոբելյանի առիթով Վենետիկ ժամանած «Ալեք Մանուկյան» մշակութային հիմնադրամի ստեճապետ Երվանդ Ազատյանն իր խոսքում ասաց. «Միսիթարյան միաբանությունը մաս կկազմե մեր էության և ամեն հայ երախտագիտական սուրբ մը ունի անոր ստեղծած հակա հարստության հանդեպ», ասպ շարունակեց. «Ալեք Մանուկյան» հիմնարկը մեծ հարգանք ունի և այսուհետև ևս ճուշ վերաբերումը պիտի պահե հանդեպ Միսիթարյան միաբանության:

Հիշալ գիտածողովին Հայաստանից որպես քանախոս էր հրավիրված տողերիս հեղինակը: Ներկայացրածս զեկուցումը՝ «Խաչատուր Էրզրու մեցու դերը Միսիթարյան միաբանության Վենետիկում հաստատվելու հարցում», նպատակ ուներ բազմաթիվ փաստերով ցույց տալու 17—18-րդ դարերի ասիմանագծին ասպրած և ստեղծագործած հայ մշակույթի այս բազմերախտ գործչի անուրանալի դերը Վենետիկի Ս. Ղազար կղզին որպես Միսիթարյանների վերջնական հանգրվան ընտրելու, ինչպես նաև միաբանության հետագա կայացման գործում:

Մնացած զեկուցումները շոշափում էին «Հայագիտական աշխարհն ու մամուլը Վենետիկից դուրս» ընդհանուր թեման: Լոս Անջելեսի UCLA համալսարանի դասախոս Կարո Մոսյանը հանգամանորեն խոսեց «Ամերիկայի Միացյալ Նահանգների հայագիտական մամուլի մասին»՝ զանազանություն դնելով հայագիտական և հսկական միջև և

ընդգծելով, որ առաջին իմաստով մամուլ գոյություն չունի Միացյալ Նահանգներում «ի բաց առյալ այն գիտական հոդվածները, որոնք պատահաբար լույս կտեսնեն համալսարանական մամուլին մեջ»:

Բեյրութի «Մասիս» անագրի խմբագիր Անդրանիկ վրդ. Կոսնյանը զեկուցեց «Միջին Արևելքի հայագիտական մամուլը» թեմայի շուրջ, Սուրեն Քոլյանյանը (Ռուսիայի)՝ «Հայագիտական մամուլը Քայաստանում», իսկ Ռեմոն Հարություն Գևորգյանը՝ «Եվրոպայի հայագիտական մամուլը»: Վերջին քանախոսը Լոս Անջելեսի UCLA համալսարանի գրադարանային հայկական բաժնի վարիչ Միա Ալվազյանն էր, որ ներկայացրեց «Հայագիտություն» թե Հայ-գիտություն նախաեղեռնական պոլսահայ մամուլին մեջ» զեկուցումը:

«Բազմավայր» 150-ամյա հոբելյանին նվիրված գիտածողովի հանդիսավոր փակումը տեղի ունեցավ Ս. Ղազարի մայրավանքում աշխարհահռչակ երգեհոնահար Պերճ Ժամկոչյանի համերգով, որը հնչեցրեց դասական և հայկական պատարագային երաժշտություն: Իր իսկ նվիրած փառավոր երգեհոնով նա աչք օրը առաջին անգամ կատարեց ամերիկացի ժամանակակից կոմպոզիտոր Ջեֆրի Բրոդիի «Միսիթարյան թափոր» ստեղծագործությունը՝ նվիրված այս լուսավոր հոբելյանին:

Հոբելյանական հանդիսույթանց օրերին մարավանքի «Ստեփան Սրապյան» սրահում բացվել էր հայ պարբերական մամուլի ճոխ ցուցահանդես, որտեղ կողք կողքի ցուցադրված էին «Ազդարարի» առաջին համարներից մինչև հայագիտության տարբեր մարզերն ընդգրկող «Բազմավայր» մատենաշարի 36 հատորները: Վենտրոնում հոբելյարի Բացառիկ թիվն էր՝ իր հարուստ բովանդակությամբ:

Լ. Ե. ԼԱՃԻԿՅԱՆ

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՈՒՐԵՑԱՆԸ

Հայ ժողովրդի բազմադարյա պատմության մեջ բացառիկ կարևոր իրադարձություն պետք է համարել Երևանի պետական համալսարանի հիմնադրումը: Դրանով շուրջ վեց հարյուր տարվա ընդմիջումից հետո Հայաստանում վերականգնվում էին համալսարանական քարձրագույն կրթության ավանդույթները:

Երևանի համալսարանը, հիմնադրվելով Հայաստանի առաջին Հանրապետության օրոք՝ 1819 թ. մայիսի 16-ին, և լինելով մեր բուհերի առաջնեկը, իր գոյության յոթուկես տասնամյակների ընթացքում արտաբնական է շուրջ 80 հազար քարձրորակ մասնագետներ, որոնցից 800-ը՝ օտարերկրացիներ, աշխարհում և

310 պիտոքահայեր: Նրա շրջանավարտներից շատերը հետագայում դարձել են աշխարհահռչակ գիտնականներ, գրողներ ու մշակութային գործիչներ: Իր հիմնադրման տարում համալսարանն ունեցել է ընդամենը մեկ՝ պատմալեզվագրական ֆակուլտետ՝ 260 ուսանողով և 27 դասախոսով:

Երևանում համապատասխան շենք ու հարմարություններ չլինելու հետևանքով այն տեղափոխվում է 1920 թ. փետրվարի 21-ից սկսած մեկ կիսամյակ գործում է Ալեքսանդրապոլում: Սակայն շուտով համալսարանի վարչությունն ու պրոֆեսորադասախոսական կազմը գտնում են, որ Հայաստանի մայր բուհը պետք է գործի մայրաքաղաքում և ոչ թե